**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

2017թ.«29» մայիսի
N 49

Լոռու մարզպետ
պ-ն Ա.Նալբանդյանին

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի թիվ 13-Ա որոշումը:

Առդիր՝ 25 թերթ:

Համայնքի ղեկավար Ս.Տռուզյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնք, գ. Նոր Խաչակապ
հեռ. 093-20-76-56

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> մայիսի 2017 թվականի N 13- Ա

## ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 6-րդ կետի է ենթակետի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի (այսուհետ՝ Համայնք) քաղաքացիական պաշտպանության պլանը,համաձայն հավելվածի:
2. Հաստատել՝

1) Համայնքի քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) վիճակի հիմնական ցուցանիշները, համաձայն հավելված 1-ի,
2) Համայնքի տարածքի հնարավոր իրավիճակը եվ բացատրագիրը, համաձայն հավելված 2-ի,
3) Համայնքի կառավարման, կապի և ազդարարման սխեման, համաձայն հավելված 3-ի,

4) Համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության եվ բացատրագիր, համաձայն հավելված 4-ի,

5) Համայնքի բնակչությանն անհատական պաշտպանական միջոցներով ապահովման հաշվարկը, համաձայն հավելված 5-ի,

6) Համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը, համաձայն հավելված 6-ի,

7) Համայնքի բնակչության տարահանման հաշվարկը, համաձայն հավելված 7-ի,

8) Համայնքի ՔՊ ուժերի և միջոցների հաշվարկը, համաձայն հավելված 8-ի,

9) Կապի միջոցների հաշվարկը, համաձայն հավելված 9-ի:

10) Ինժեներական ապահովման տեխնիկայի հաշվարկը, համաձայն հավելված 10-ի:

3. Յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը կատարել ճշգրտումներ Համայնքի ՔՊ պլանում՝ տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ:

4. Որոշման կատարման հսկողությունը թողնում եմ ինձ վրա:

Համայնքի ղեկավար Ս. Տոուզյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Նոր Խաչակապ համայնքի ղեկավարի
2017 թվականի մայիսի 24-ի N 13-Ա որոշման

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

1. Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի (այսուհետ՝ Համայնք) պլանը· (այսուհետ՝ պլան) գաղտնի չէ, կազմվում է՝ 2 օրինակից. 1-ին օրինակը պահպանվում է համայնքում, 2-րդ օրինակը՝ ՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչությունում:

2. Պլանը մշակվում է՝ ղեկավարվելով <<Քաղաքացիական պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով:

3. Պլանը բխում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության պլանից:

## I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 1. Պլանի սահմանումը եվ նպատակը

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի (այսուհետ՝ Մարզի) Նոր Խաչակապ համայնքի Քաղաքացիական պաշտպանության պլանը (այսուհետ Պլան) Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում համայնքի ղեկավար կազմի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգը քաղաքացիական պաշտպանության բնագավառում: Պլանի նպատակն է՝ կանոնակարգել Նոր Խաչակապ համայնքի ղեկավար կազմի խնդիրները, գործողություններն ու դրանց իրականացման կարգի մարզի բնակչությանն ու նյութական արժեքները պաշտպանելու համար:

### 2. Պլանում օգտագործվող հիմնական հասկացությունները

1) ***Քաղաքացիական պաշտպանություն*** ՝ *միջոցառումների համակարգ*՝ ուղղված բնակչության և նյութական արժեքների պաշտպանությանը կամ պաշտպանության նախապատրաստմանը ՀՀ-ի վրա զինված հարձակման ,դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում

2) ***քաղաքացիական պաշտպանության ծառայություններ*** ՝պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, Ընկերություններում իրենց իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու համար ստեղծված ծառայություններ.

3) ***քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ*** ՝համայնքներում, Ընկերություններում ստեղծվող կազմավորումներ, որոնք հանդերձավորված են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար նախատեսված տեխնիկայով, հանդերձանքով, գույքով ու նախատեսված են իրականացնելու քաղաքացիական պաշտպանության միջոցառումներ և չեն մտնում ՀՀ զինված ուժերի և այլ զորքերի կազմի մեջ.

4) ***անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ***՝ առաջնահերթ աշխատանքներ՝ ուղղված մարդկանց կյանքին և առողջությանն սպառնացող այնպիսի գործոնների ազդեցության վտանգի վերացմանը, որոնք խոչընդոտում են մարդկանց որոնելուն և փրկելուն, ինչպես նաև

շենքերի, շինությունների ամրացմանը կամ փլմանը, հեղուկ վառելիքի, գազի, էլեկտրաէներգիայի և ջրի աղբյուրների վթարային անջատմանը, բնակչության ու փրկարարների կենսաապահովման առաջնահերթ օբյեկտները ժամանակավոր սխեմաներով վերականգնմանը, վերանորոգմանը և տարածքի սանիտարական մաքրմանը:

### 3.Պլանում ներգրավվող քաղաքացիական պաշտպանության ծառայությունները, քաղաքացիական պաշտպանության կազմավորումները և դրանց գործառույթները

*1)Քաղաքացիական պաշտպանության ծառայություններ՝* ծառայություններն ստեղծվում են. Ընկերություններում՝ իրենց իրավասությունների սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու համար:
*2) Քաղաքացիական պաշտպանության կազմավորումները՝* անհրաժեշտության դեպքում, ստեղծվում են Ընկերություններում՝ համապատասխան քաղաքացիական պաշտպանության պետերի որոշումներով՝ փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կատարման համար:

### 4.Պլանի իրավական հիմքը

*1. Պլանի իրավական հիմք են հանդիսանում՝*
1) ՀՀ Սահմանադրությունը
2) ՀՀ օրենքը «Պաշտպանության մասին»
3) ՀՀ օրենքը «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին»,
4) ՀՀ օրենքը «Քաղաքացիական պաշտպանության մասին»,
5) ՀՀ օրենքը փրկարար ուժերի և փրկարարի կարգավիճակի մասին
6) ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշումը
7) ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 13-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 1532-Ն որոշումը,
8) ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» թիվ 384-Ն որոշումը,
9) ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 13-ի «Վտանգավոր տարածքից բնակչության տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 746 որոշումը,
10) ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 28-ի «Բնակչության պատսպարման կարգը հաստատելու մասին» թիվ 592 որոշումը,
11) ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի «Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովելու կարգը հաստատելու մասին» թիվ 679 որոշումը,
12) ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի «Ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգերի ստեղծման և գործունեության ապահովման կարգը սահմանելու մասին» թիվ 1064-Ն որոշումը
13) ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների մասին բնակչության ազդարարման կարգը սահմանելու մասին» թիվ 1925-Ն որոշումը
14) ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու Ընկերությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգը հաստատելու մասին» թիվ 46-Ն որոշումը,

15) ՀՀ կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Կառավարման մարմինների և բնակչության իրազեկման կարգը սահմանելու մասին» թիվ 1494-Ն որոշումը:

## II ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 2.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նոր Խաչակապ գյուղական համայնքը (այնուհետև համայնք կամ գյուղ) գտնվում է հյուսիս-արևմտյան մասում:Մարզկենտրոն Վանաձորից գտնվում է 15կմ հեռավորության վրա:Հարևան է Արջահովիտ և Քարաձոր համայնքներին:Համայնքի տարածքով անցնում է <<Հարավ-Կովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի երկաթգիծը՝ ընդհանուր 3կմ երկարությամբ: Համայնքի տարածքի առավելագույն բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1480մ: Համայնքի զբաղեցրած տարածքը 2452.01հա է, այդ թվում բնակելի զանգվածը 89.22հա: Բնակչության թիվը 622 մարդ, այդ թվում արական սեռի 304, իգական սեռի 318 մարդ: Բնակչության թիվը ըստ տարիքային՝ 0-9 տարեկան 60, 10-17 տարեկան 47, 17-ից բարձր 515 մարդ: Աշխատունակ բնակչությունը կազմում է 415 մարդ:

Համայնքի հեռավորությունը պետական սահմանից 80 կմ է:

Կլիման չոր ցամաքային է, ցուրտ՝ սակավաձյուն,պարզկա ձմեռներով ու շոգ չորային ամառներով:Օդի միջին ջերմաստիճանը ձմռանը տատանվում է 3-ից 25 աստիճան ըստ Ցելսիուսի,ամռանը՝ 15-ից 30 աստիճան:Զբաղվածությունը՝ անասնապահություն և բուսաբուծություն: Տարածքով անցնում է 5կմ երկարությամբ Հ-163 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհը:

Համայնքի տարածքում աշխատում են 2 խանութներ: Գործում է 1 դպրոց, 1 բուժակ մանկաբարձական կետ,կապի բաժանմունք:Համայնքն ունի փողոցային լուսավորության ցանց: Վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններ չկան:Համայնքի ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս 2 աղբյուրներից՝ 0.8 լ/վ թողունակությամբ,առկա է խմելու ջրի կարգավորման 2 ջրամբար: Էներգամատակարարումը իրականացվում է թվով 2 ենթակայաններից՝ բարձր լարման 2500մ և 6500մ ցածր լարման էլեկտրահաղորդագծերից: Համայնքը գազաֆիկացված է:Առկա է միջին և ցածր ճնշման 6000մ երկարությամբ գազատար խողովակներ: Կապը հիմնականում ֆիքսված է բջջային կապի միջոցով: Հաշվառված են 175 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, 525 թև թռչուն, 103 մեղվաընտանիք, 1 ձի:

### 2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԶԵՆՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԴԻՎԵՐՍԻՈՆ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ

1. Հավանական հակառակորդի զինված ուժերի ավիացիայի, հրթիռահրետանային և դիվերսիոն հետախուզական խմբերի ազդեցության թիրախ՝ Համայնքում հնարավոր է հանդիսանան՝

1) համայնքապետարանի աշխատակազմի վարչական շենքը,.

2) պաշտպանական, տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող, բարձր վտանգավորություն ներկայացնող, հատուկ, կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտները և կազմակերպությունները.

3) գազաբաշխիչ կայանը.

4) Համայնքի թվով 2 ենթակայանները և դրանց կապող օդային գծերը.

5) ֆիքսված և բջջային հեռախոսակապի հանգույցներն ու ապահովող սարքավորումները.

6) «Հայփոստ» ՓԲԸ Համայնքի բաժանմունքը.

7) ավտոմոբիլային և ճանապարհային կառույցները.

8) բնակելի (շենքերը և տները) ֆոնդի տարածքները:

## 2.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍՏԵՂԾՎՈՂ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Հակառակորդի գործողությունների արդյունքում Համայնքի տարածքում հնարավոր է առաջանա հետևյալ իրավիճակը՝

1) լրիվ և ուժեղ ավերածությունների գոտում կարող են հայտնվել մարզկենտրոնին մոտ գտնվող Համայնքը
2) հասարակական շենքերի և օբյեկտների փլուզումների ծավալը կկազմի 550 մ³.
3) բնակչության շրջանում տուժածները կկազմեն. անվերադարձ՝ 11, սանիտարական՝ 20.
4) միջպետական, տեղական նշանակության ավտոճանապարհների, կամուրջների վնասման
5) պարագայում անհնար կդառնա տարահանումը և փրկարարական ուժերի առաջանցումը դեպի վնասված գոտիներ.
6) գազամատակարարման ցանցի վթարների կկազմեն 1 հատ.
7) էլեկտրամատակարարման ցանցի վթարները կկազմեն 1 հատ.
8) ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարները կկազմեն՝ 1 հատ.
9) դիվերսիոն գործողությունների հետևանքով կարող է աղտոտվել համայնքի ջրամատակարարման օրվա կարգավորման ջրամբարները, բաց աղբյուրները, ինչպես նաև կապտաժները.
10) կընդհատվի ֆիքսված և բջջային հեռախոսակապն ամբողջովին.
11) կընդհատվի փոստային հաղորդակցությունը.
11) բժշկական հիմնարկի շարքից դուրս գալու դեպքում անհնար կլինի բժշկական սպասարկումը

2. Հակառակորդի հարձակման հետևանքների նվազեցման և բնակչության պաշտպանության ու կազմակերպությունների գործունեության կայունության ապահովման նպատակով, ելնելով իրավիճակից Համայնքում քաղաքացիական պաշտպանության խնդիրները հետևյալն են.

1) զանգվածային խոցման և այլ զենքերից պաշտպանության ձևերի բնակչության համընդհանուր պարտադիր ուսուցում, ուսուցման կազմակերպում խաղաղ պայմաններում.
2) անհրաժեշտ տարրերի, բուժօգնության միջոցների և այլ պայմանների ստեղծում ու հուսալի պահեստավորում.
3)վտանգավոր տարածքներից բնակչության և նյութական արժեքների տարահանման և տեղաբաշխման ապահովում.
4) հրդեհավտանգ նյութեր օգտագործող կազմակերպություններում դրանց պաշարների նվազեցում մինչև անհրաժեշտ մինիմումը.
5) բազմաբնույթ կապի ստեղծում և հուսալիության ապահովում.
6)փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում և իրականացում:

# III ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

## 3.1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՂԱՂ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Համայնքը <<Մշտական>> պատրաստականության աշխատակարգում զբաղվելով իրենց ամենօրյա աշխատանքային գործունեությամբ, պետք է պատրաստ լինի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացմանը:

1.Հայաստանի Հանրապետության զինված ուժերը <<Բարձր>> պատրաստականության աստիճանի փոխադրվելու ժամանակ, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ, կազմակերպությունները անցկացնում են <<Բարձր>> պատրաստականության աշխատակարգի միջոցառումներ՝ ուղղված համայնքի բնակիչների պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի պատրաստությանը:

2. Մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգը «ԼՐԻՎ» պատրաստականության է բերվում Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության

ճգնաժամային կառավարման Համայնքի հերթապահ ուժերի ղեկավարի ազդանշանով, մարզպետի հրամանով, համաձայն որի գործողության մեջ են դրվում կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության պլանները և իրականացվում դրանցում նշված միջոցառումները:

3. «ԼՐԻՎ» պատրաստականության բերման միջոցառումների ամբողջական կատարումը իրականացվում է երկօրյա ժամկետում, համաձայն պլան գրաֆիկի:

## 3.2. ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կապը կազմակերպելու համար օգտագործվում է քաղաքային և միջքաղաքային գործող ցանցերը, բջջային և ֆաքսիմիլային կապերը, դրանց բացակայության կամ անսարքինության դեպքում սուրհանդակների միջոցով:

2. Համայնքի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է Լոռու մարզային փրկարարական վարչությունից ազդանշանը ստանալուն պես կատարվածի մասին զեկուցում է Համայնքի քաղաքացիական պաշտպանության պետին:

3. Կապի օղակի հերթապահը իր հերթին ազդարարում է Համայնքի քաղաքացիական պաշտպանության ղեկավար կազմին, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների և քաղաքացիական պաշտպանության կազմավորումների ղեկավարներին և հերթափոխում գտնվող անձնակազմին:

## 3.3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հետախուզության նպատակն է իրադրության վերաբերյալ անհրաժեշտ տվյալների ձեռքբերում՝ որոշումներ ընդունելու համար՝ ուղղված բնակչության և քաղաքացիական պաշտպանության ուժերի անձնակազմի պաշտպանությանը, ինչպես նաև փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը:

2. Հետախուզությանը ներկայացնող հիմնական պահանջներն են՝ անընդհատության, ակտիվություն, նպատակաուղղվածություն և ստացված տվյալների հավաստիություն:

3. Հետախուզության առարկա են հանդիսանում՝

1) համայնքապետարանի աշխատակազմի վարչական շենքը.

2) Դպրոցը, բուժակ մանկաբարձական կետը

3) էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման համակարգերը, կապի համակարգը,

5) հրդեհների օջախները.

6) բնակչության տարահանման և քաղաքացիական պաշտպանության ուժերի առաջանցման երթուղիները.

7) գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները.

4. Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում հետախուզության հիմնական խնդիրներն են՝

1) սանիտարահամաճարակային վիճակի ճշգրտում.

3) քաղաքացիական պաշտպանության ուժերի դեպի խոցման օջախներ մուտքի, ինչպես նաև տարահանման երթուղիների վիճակի ճշգրտում.

5. Հակառակորդի հարձակումից հետո հետախուզության հիմնական խնդիրներն են՝

1) կիրառված զենքերի տեսակների, հարվածի ենթարկված տարածքների և կազմակերպությունների բացահայտում.

3) քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղակայման վայրերում և դեպի խոցման օջախներ մուտքի երթուղիներում իրադրության ճշգրտում.

4) ինժեներական կառույցների, կոմունալ-էներգետիկ ցանցի, կապի գծերի, երկաթգծերի, ավտոմայրուղիների վիճակի ճշգրտում.

5) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ողջ ընթացքում իրադրության փոփոխության անընդհատ հսկողության իրականացում.

6) հրդեհների տարածքների հայտնաբերում և հրդեհների տարածման ուղղությունների որոշում:

6. Համայնքում հետախուզությունը իրականացնում է համայնքի հետախուզական խումբը 15 մարդ անձնակազմով 2 միավոր տեխնիկայով:

7. Հետախուզության արդյունքները 2 ժամը մեկ զեկուցվում է Համայնքի ՔՊ շտաբին:

## 3.4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

### 3.4.1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Անհատական պաշտպանության միջոցները նախատեսված են պաշտպանելու մարդու օրգանիզմը, մաշկը և հանդերձանքը ռադիոակտիվ, ուժեղ ներգործող թունավոր նյութերից և մանրէաբանական միջոցներից:

2. Համայնքը չունի անհատական պաշտպանության միջոցներ.

3. Անհրաժեշտության դեպքում անհատական պաշտպանության միջոցների վերաբերյալ հայտ է ներկայացվում Լոռու մարզպետին.

4. Համապատասխան անհատական միջոցների տրամադրումից հետո դպրոցում կծավալվի բաշխման կետ, որտեղից էլ բնակչությանը կհատկացվի այն:

### 3.4.2. ՊԱՍՏՊԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Բնակչության պատսպարումը պաշտպանական կառույցներում մարդկանց կյանքի և գործունեության ապահովման հիմնական միջոցն է: Բնակչության պատսպարումը ռազմական դրության և հակառակորդի հանկարծակի հարձակման կամ դրա անմիջական վտանգի առկայության դեպքում իրականացվում է <<Օդային տագնապ>> ազդարարման ազդանշանով:

2. Համայնքում բնակչության պատսպարումն իրականացվում է համայնքի կազմակերպությունների և շենքերի նկուղներում և առաջին հարկերում, բնակելի ֆոնդի տարածքներում (նկուղային տարածքներ):

### 3.4.3. ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Տարահանումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարելու, ինչպես նաև այնպիսի արտակարգ իրավիճակների առաջացման կամ անմիջական սպառնալիքի դեպքում, որի հետևանքով որոշակի տարածքներում (բնակավայրերում, կազմակերպություններում կարող են առաջանալ մարդկանց կյանքի և կենսագործունեության բնականոն պայմանների վրա բացասաբար ազդող գործոններ:

2. Որպես կանոն տարահանվող բնակության ժամանակավոր բնակեցումն իրականացվում է Նոր Խաչակապ համայնքում ստեղծված ժամանակավոր տեղակայման կետերում:

3. Համայնքի բնակչության մասնակի տարահանումն իրականացվում է տարահանման հավաքակայաններից հետիոտն կարգով:

4. Տարահանումն իրականացնելու նպատակով Համայնքում ստեղծվում է տարահանման երկու հավաքակայան: Տարահանման երթուղիները ճշտվում են համայնքի տարահանման հանձնաժողովի հետ:

5. Համայնքի բնակչության և գույքի տարահանումն իրականացվում է տարահանման հավաքակայանից, Համայնքի տարածքից՝սեփական ուժերով և միջոցներով, համագործակցելով մարզային տարահանման հանձնաժողովի հետ:

## 3.5. ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

### 3.5.1.ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ՎԹԱՐԱՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հակառակորդի հարվածից հետո իրավիճակի գնահատմանն զուգընթաց իրականացվում է խափանված կառավարման համակարգի վերականգնում և փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպում:

2. Փրկարարական աշխատանքները կանոնակարգելու նպատակով ստեղծվում են աշխատանքային տեղամասեր, որտեղ փրկարարական աշխատանքների անընդհատությունը ապահովելու նպատակով Համայնքի ՔՊ պետի որոշմամբ սահմանվում են աշխատանքային երկու և ավելի հերթափոխեր:

3. Փրկարարական աշխատանքները ներառում են՝

1) աշխատանքային տեղամասերի և երթուղիների ընդհանուր և հատուկ հետախուզություն.

2) հրդեհների մեկուսացում և մարում.

3) տուժածների որոնում և դուրս բերում վտանգավոր տարածքներից.

4) տուժածներին բժշկական օգնության ցուցաբերում և բժշկական հաստատություններ տեղափոխում.

5) վտանգավոր տարածքներից բնակչության տարահանում

4. Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքները ներառում են՝

1) ճանապարհների և կամուրջների մաքրում (վերականգնում).

2) կոմունալ-էներգետիկ և կապի ցանցերում վթարների վերացում ու գործունեության վերականգնում.

3) փլուզմամբ սպառնացող կոնստրուկցիաների (շինությունների) ամրացում կամ փլեցում.

4)թաքստոցների և ապաստարանների վերականգնում

5) հասարակական կարգի ապահովում

5. Համայնքում խոշոր փլվածքների առկայության դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների անցկացմանը և պաշտպանական կառույցների մուտքերի մաքրման աշխատանքներին ներգրավվում են ինժեներական կազմավորումները:

6. Ճանապարհի մաքրման և վերականգնման, հրդեհների մեկուսացմանն ու մարմանը զուգահեռ իրականացվում են կոմունալ-էներգետիկ ցանցերի և կազմակերպությունների վթարների վերացման աշխատանքներ:

7. Փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրակա-նացման հերթականությունը, ձևերը և կատարման կարգը կախված են փլվածքների բնույթից, վթարների տեսակից, երկրորդային վտանգ ներկայացնող գործոններից:

8. Հիմնականում տուժած տարածք ուժերի մուտք գործելու հերթականությունը հետևյալն է՝

1) հետախուզությունը.

2) հակահրդեհային կազմավորումը

3) բժշկական օղակը.

4) փրկարարական կազմավորումը.

5) հասարակական կարգի պահպանման կազմավորումը,

6) կապի օղակը:

### 3.5.2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. Ուժերի խմբավորումը Համայնքում առկա քաղաքացիական պաշտպանության ուժերի մի մասն է, նախատեսված կոնկրետ վայրում (տարածքում, ուղղությունում) փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ կազմակերպելու և իրականացնելու համար:

2. Հիմնականում տուժած տարածք ուժերի մուտք գործելու հերթականությունը հետևյալն է՝

1) ճանապարհների անցողականության ապահովման խմբերը և հետախուզությունը.
2) հիմնական ստորաբաժանումները (հակահրդեհային ապահովման և փրկարարական խմբերը).
3) բժշկական խումբը.
4) հասարակական կարգի պահպանման խումբը:

## 3.6 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 3.6.1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1.Հասարակական կարգի պահպանումը իրականացվում է քաղաքացիական պաշտպանության հասարակական կարգի պահպանման կազմավորման ուժերով, որոնք պատրաստության են բերվում 1 ժամվա ընթացքում:

2. Հիմնական խնդիրներն են

1) Համայնքում հասարակական կարգի պահպանմանը,

2) անհրաժեշտության դեպքում հակառակորդի դիվերսիոն խմբերի վնասազերծումը

3. Հասարակական կարգի պահպանման ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1)հասարակական կարգի պահպանման միջոցառումներն իրականացվում են պահակակետերում, մարդաշատ ու զանգվածային միջոցառումների անցկացման վայրերում.

2) պահակակետերում ծառայությունը կազմակերպվում է շուրջօրյա: Գիշերային ժամերին՝ անձնակազմի անդամների թիվը կրկնապատկվում է:

Ծառայություն կատարող վերակարգի՝ միմյանց և Համայնքի հետ փոխհամագործակցությունը իրականացվում է ռադիոկապով (ռադիոկապի բացակայության դեպքում՝ լարային կապով).

4. Ընկերության պահպանության ուժեղացմանն ուղղված կատարվում են հետևյալ միջոցառումները՝

1) Համայնքի պահպանությունն իրականացնում են հասարկական կարգի պահպանման կազմավորումը համատեղ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժնի կողմից տրամադրած ուժերի հետ միասին.

2) Ընկերության պահպանությունն ուժեղացվում է հետևյալ կարգով՝

ա. կարևորագույն նշանակության մասնաշենքում, պահեստներում և պահատեղերում ստուգվում են պահպանության և հակահրդեհային ահազանգման սարքավորումների առկայությունն ու աշխատունակությունը, անհրաժեշտության դեպքում տեղադրվում են լրացուցիչ սարքավորումներ.

բ. վերահսկվում են ընկերության պարիսպը և իրականացվում է քանդված մասերի վերանորոգման աշխատանքներ.

գ. ստուգվում է Համայնքի լուսաքողարկման վիճակը՝ ապահովելով անխափան աշխատանքը լուսաքողարկման պայմաններում.

դ. մտցվում է շուրջօրյա աշխատանքային ռեժիմ՝ 2 հերթափոխով, յուրաքանչյուր պահակակետում՝ մեկ հերթափոխում 2 ծառայող:

### 3.6.2. ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպչական և ինժեներատեխնիկական համալիր միջոցառումներ են, որոնք ուղղված են հրդեհների կանխմանը կամ տարածման արգելմանը, մարդկանց պաշտպանությանը հրդեհներից, բարձր ջերմաստիճանից և ուժեղ ծխապատված գոտիներից:

2. Համայնքի քաղաքացիական պաշտպանության հակահրդեհային անվտանգության ապահովման համար պատասխանատու է համայնքի հակահրդեհային ջոկատը:

3. Հակահրդեհային ապահովման մեջ ընդգրկվում են հրդեհային հետախուզությունը, հրդեհի մեկուսացումը և մարումը:

4. Համայնքի տարածքում զանգվածային հրդեհների առաջացման պայմաններում հակահրդեհային ջոկատի ուժերը չեն կարող բավարար լինել, ուստի հրդեհաշիջմանը անհրաժեշտ է ընդգրկել նաև քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, հասարակական ուժեր և բնակչությանը:

5. Հակահրդեհային ջոկատը, բացի հրդեհաշիջման աշխատանքներից, մասնակցում են նաև.

1) փլուզված տարածքներից մարդկանց փրկման աշխատանքներին.

2) Համայնքի տարածքում գտնվող անտառների հրդեհաշիջմանը.

5. Հակահրդեհային պաշտպանության տեսակետից առաջնահերթ արձագանքվում են՝

1) Համայնքապետարանի վարչական շենքը.

2) կազմակերպությունների (դպրոց և այլն) վարչական շենքերը.

3) էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, կապի, առողջապահական ու բնակչության կենսաապահովման կազմակերպությունների շենք- շինությունները:

6. Պրոֆիլակտիկ նկատառումներից ելնելով, բնակչությունը տեղեկացվում է ռազմական իրավիճակում հակահրդեհային լրացուցիչ միջոցառումների մասին, անհրաժեշտության դեպքում պրոֆիլակտիկ խմբի կողմից իրականացվում է բնակչության տարահանում:

## 3.6.3. ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված մարդկանց աշխատունակության ապահովմանը, տուժածներին և հիվանդներին բժշկական օգնության ցուցաբերմանը, նրանց տեսակավորմանը, տեղափոխմանը բժշկական հիմնարկներ, բուժման կազմակերպմանը:

2. Համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ապահովման համար պատասխանատու է Համայնքի բժշկական ապահովման ծառայությունը:

3. Բժշկական միջոցառումները ընդգրկում են անհրաժեշտ ուժերի և միջոցների նախապատրաստումը, ինչպես նաև կազմակերպումը և անցկացումը.

1) բժշկական օգնության ցուցաբերում վնասված օջախում փրկարարական աշխատանքների կատարման ժամանակ և վնասվածների տարահանումը բուժ հիմնարկներ:

2) Քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ բնակչության բուժ-տարահանման, հակահամաճարակային, սանիտարահիգիենիկ ապահովումը:

4. Տուժած բնակչությանը բժշկական օգնություն ցույց տալու տակտիկան կախված կլինի թշնամու հասցրած հարվածի հետևանքներից և առաջացած խոցման օջախի բնույթից:

## 3.6.4. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ապահովումը միջոցառումների համալիր է, որն ընդգրկում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար նախատեսված բոլոր տիպի տրանսպորտային միջոցների նախապատրաստումը, աշխատունակ վիճակում պահպանումը, բաշխումը և շահագործումը:

2. Քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայությունը՝

1) հաշվառում և տրանսպորտային միջոցներ է հատկացնում՝

ա. վտանգավոր տարածքներից բնակիչների և նյութական արժեքների տարահանման տրանսպորտային ապահովման համար.

բ. փրկարարական ուժերի տեղափոխման համար.

գ. տուժածների փոխադրման համար.

3. Տրանսպորտային միջոցների անհրաժեշտության դեպքում ներկայացվում է հայտ:

### 3.6.5. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովումը միջոցառումների համակարգ է՝ ուղղված բնակչության պաշտպանությանը, քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների առաջանցման հիմնական ու շրջանցիկ ուղիների ապահովմանը, խոցման օջախներում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:
2. Համայնքում քաղաքացիական պաշտպանության ինժեներական ապահովման համար պատասխանատու է ընկերության ՔՊ ինժեներական ծառայությունը:
3. Քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայությունը՝
1) ապահովում է քաղաքացիական պաշտպանության կազմավորումների առաջանցման երթուղիները դեպի խոցման օջախներ.
2) կազմակերպում է վթարային շենքերի և կառույցների քանդման (վերականգնման) աշխատանքները.
3) աջակցում է կոմունալ-էներգետիկ ցանցերում առաջացած վթարների վերացման աշխատանքներին.

### 3.6.9. ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ, ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Համայնքի հնարավորությունից ելնելով ստեղծված չէ ճառագայթային և քիմիական ՔՊ ծառայություն ու կազմավորում:
2) Համայնքի տարածքում աշխատողների, ՔՊ ծառայությունների և կազմավորումներին ճառագայթային, քիմիական, կենսաբանական և սանիտարական մշակման (այդ թվում՝ աշխատողների հագուստի, տրանսպորտի, տարածքի և կառույցների գազազերծման ապաակտիվացման և ախտահանման) աշխատանքները կազմակերպվում է , մարզային համապատասխան ծառայությունների կողմից՝ ելնելով ստեղծված իրավիճակից:

### 3.7. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ապահովել Համայնքի տարածքում առաջացած իրավիճակի մասին իրական համապատասխան տեղեկատվության օպերատիվ ստացման, վերլուծման ու գնահատման կազմակերպումը և համապատասխան վթարավերականգնողական խմբերի ղեկավարներին վթարավերականգնողական աշխատանքների վերաբերյալ անհապաղ առաջադրանքների իջեցումը:
2. երկրորդային խոցման գործոնների առաջացման հավանականության բացառման (նվազեցման) ուղղությամբ՝
ա) էներգամատակարարման, ջրամատակարարման և գազամատակարարման համակարգերի աշխատանքների կայունության բարձրացմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացում:

### 3.7. ՓՈԽԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում փոխգործողության կարգով կարող են ընդգրկվել հարակից համայնքների (Արջահովիտ, Քարաձոր) կազմավորումները, հասարակական փրկարարական ջոկատների և կամավորական միությունների անձնակազմերը:

## IV ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

### 4.1. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ <<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

1. Հակառակորդի հանկարծակի հարձակման մասին բնակչության ազդարարումը՝ իրականացվում է «Օդային տագնապ» ազդարարմամբ (հաղորդմամբ): «Օդային տագնապ> ազդանշանը հաղորդվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության հերթապահ ուժերի ղեկավարի միջոցով, կապի և ազդարարման միջոցների կիրառմամբ: Ազդանշանը տրվում է նաև մարզի տարածքի զինվորական կայազորի հերթապահի միջոցով: Ազդանշանը անմիջական հասցվում է մինչև քաղաքացիական պաշտպանության մարմինները և բնակչությանը՝ կենտրոնացված ազդարարման ավտոմատացված համակարգով, կապի բոլոր գործող միջոցներով.

2. Ելնելով իրավիճակից ազդանշանի հաղորդմանը զուգահեռ կարող են տրվել նաև որոշակի հանձնարարություններ բնակչության վարվելակերպի վերաբերյալ:

3. «Օդային տագնապ» ազդանշան ստանալու դեպքում Համայնքում անհապաղ իրականացվում են՝

1) բնակչության անհապաղ պատսպարումը առկա (մոտակա) նկուղային հարկերում և այլ թաքստոցներում:

2) կասեցվում է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների ընթացքը, ինչպես բնակավայրերում, այնպես էլ ավտոճանապարհներում.

4. Նշված միջոցառումների իրականացման համար հատկացվում է 7-10 րոպե:

### 4.2. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ <<ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԻ ԱՎԱՐՏ>> ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

1. «Օդային տագնապի ավարտ» ազդանշանը ազդարարվում է կապի և ազդարարման աշխատունակությունը պահպանած տեխնիկական միջոցներով և այլ հնարավոր ձևերով ու եղանակներով՝ տվյալ իրավիճակին համապատասխան մարդկանց վարվելակերպի կանոնների տեքստային հաղորդմամբ:

2. Ազդանշանը ստանալով իրականացվում են՝

1) ստուգվում և վերականգնվում է կապը Համայնքի ղեկավար կազմի հետ.

2) Ճշգրտվում և հնարավորության դեպքում վերականգնվում է պահպանված քաղաքացիական պաշտպանության կազմավորումների աշխատունակությունը, հիմնական ուշադրությունը դարձնելով հետախուզական և փրկարարական կազմավորումների վրա.

3) իրականացվում է Համայնքի տարածքի հետախուզություն, հիմնական ուշադրություն դարձնելով առավել մարդաշատ վայրերի, էներգոհամակարգերի հետազոտման, վտանգավոր տեղամասերում առաջացած վնասման երկրորդային գործոնների ազդեցության ուսումնասիրման վրա.

4) Համայնքի տարածքից, հավաքվում և ամփոփվում են տվյալներ՝ մարդկային և նյութական կորուստների մասին, որոնց հիման վրա մշակվում և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչություն և ՀՀ Լոռու մարզպետին է ներկայացվում ամփոփ տեղեկագիր հակառակորդի հարձակման հետևանքով ստեղծված իրավիճակի և մարդկային ու նյութական կորուստների մասին:

5) վերականգնվում է կապի և կառավարման կայուն գործունեությունը:

3. Հետախուզական տվյալների հիման վրա կազմվում է փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպման և իրականացման պլանժամանակացույց, փրկարարական ուժերի և միջոցների հաշվարկ՝ ըստ աշխատանքային

տեղամասերի բաշխման, որով հստակեցվում են միջոցառումների կատարման ժամկետները, պատասխանատու ղեկավարներն ու կատարողները:

4. Համայնքի ՔՊ շտաբի հետ իրականացվում է մայրուղիների և հաղորդակցության ճանապարհների օգտագործման կարգի մասին ճշգրտումներ:

5. Հատուկ կարևորության և արխիվային փաստաթղթերի նախապատրաստում` արխիվ հանձնելու համար:

6. Աշխատատեղերում ղեկավար կազմի շուրջօրյա հերթապահության սահմանում:

7. Ցուցում ստանալու դեպքում Համայնքի ղեկավար կազմի տարհանում պահուստային կառավարման կետ:

8. Սեփական ուժերի և միջոցների անբավարարության դեպքում ՀՀ Լոռու մարզպետին է ներկայացվում լրացուցիչ փրկարարական ուժերի և միջոցների անհրաժեշտության հայտ:

## V. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի ղեկավարը հանդիսանում է Համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության ողջ գործընթացը:

2. Համայնքի բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումն ու կառավարումն իրականացնում է Համայնքի ղեկավարը` Համայնքի քաղաքացիական պաշտպանության պետը, կառավարման հիմնական և պահեստային կետերից: Առանձին դեպքերում փրկարարական աշխատանքների տեղամասերում աշխատանքների կառավարումը կարող է իրականացվել շարժական կառավարման կետերից

3. Բնակչության տարահանման երթուղիներում և քաղաքացիական պաշտպանության ուժերի մուտքի ուղիներում կառավարումը կազմակերպվում է շարժական կառավարման կետերի միջոցով:

4. Խոցման օջախում փրկարարական անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարման անմիջական ղեկավարման համար օգտագործում են կապի շարժական միջոցներ:

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ 01.01.2017Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

| ՀՀ ը/կ | Բովանդակությունը | Չափման միավորը | Ցուցանիշը |
|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. |
| | 1. Ընդհանուր տվյալներ | | |
| 1. | Տարածքը | քառ.կմ | 2954.77 հա |
| 2. | Բնակչությունը.<br>այդ թվում՝ | հազ. մարդ | 622 մարդ |
| | - մինչև 1 տարեկան | հազ. մարդ | 4 մարդ |
| | - 1-9 տարեկան | հազ. մարդ | 56 մարդ |
| | - 10-17 տարեկան | հազ. մարդ | 47 մարդ |
| | - 17-ից բարձր | հազ. մարդ | 515 մարդ |
| | - աշխատունակ տարիքի | հազ. մարդ | 415 մարդ |
| 3. | Կազմակերպություններ՝ այդ թվում՝ | քանակը | 4 |
| | - խառը կազմակերպություն | քանակը | 2 |
| | - կենսաապահովման | քանակը | - |
| | - քիմ. վտանգավոր օբյեկտներ<br>այդ թվում՝ | քանակը | - |
| | - աշխատողների քանակը | քանակը | - |
| | - վտանգավոր գոտու բնակչության քանակը | քանակը | - |
| | - ճառագայթային վտանգավոր օբյեկտներ<br>այդ թվում՝ | քանակը | - |
| | - աշխատողների քանակը | քանակը | - |
| | - վտանգավոր գոտու բնակչության քանակը | քանակը | - |
| | - առավել վտանգավոր ջրամբարներ<br>այդ թվում՝ | քանակը | - |
| | - ջրածածկման գոտու բնակավայրերի քանակը | քանակը | - |
| | - ջրածածկամն գոտու բնակչության քանակը | քանակը | - |
| | - հրդեհավտանգ, պայթյունավտանգ օբյեկտներ | քանակը | - |
| | -կարևորագույն նշանակության օբյեկտներ | քանակը | 2 |
| 4. | Առկա կառավարման պահեստային կետեր.<br>այդ թվում՝ | քանակը | - |
| | -ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերին համապատասխանող | քանակը | |
| | 2. Բնակչության պատսպարում | | |
| 5. | Ենթակա է պատսպարման ընդամենը.<br>այդ թվում՝ | պատսպարվողների քանակը | 622 |
| | - ապաստարաններում | | |
| | - հակաճառագայթային թաքստոցներում | պատսպարվողների քանակը | - |
| | -նկուղային և խորացված տարածքներում | պատսպարվողների քանակը | 622 |
| | - պարզագույն թաքստոցների անհրաժեշտ քանակը | պատսպարվողների քանակը | - |

| | | | |
|---|---|---|---|
| 3. Անհատական պաշտպանության միջոցներով ապահովում | | | |
| 6. | Հակագազերով՝ բնակչությանը այդ թվում՝ | քանակը | - |
| | - մինչև 1.5 տարեկան | քանակը | - |
| | - 1.5 – 7 տարեկան | քանակը | - |
| | - 7 – 17 տարեկան | քանակը | - |
| | - 17-ից բարձր | քանակը | - |
| | քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմերը | քանակը | - |
| 7. | Շնչադիմակներով քաղաքացիական պաշտպանության կազմավորումների անձնակազմերը | քանակը | - |
| 8. | Հետախուզական և չափահսկողական սարքերով այդ թվում՝ | քանակը | - |
| | - ճառագայթային | քանակը | - |
| | - քիմիական | քանակը | - |
| | - դոզաչափական հսկողություն | քանակը | - |
| 9. | ՔՊ գույքի պահպանումը | քանակը | - |
| | - կազմակերպություններում | քանակը | - |
| | - պետպահուստի ֆոնդում | քանակը | - |
| 4. Տարահանման միջոցառումներ | | | |
| 10. | Տարահանման ենթակա բնակչությունը | բնակավայրերը | 1 |
| | | բնակչության քանակը | 622 |
| | -վտանգավոր ջրածածկման տարածքներից | բնակավայրերը | - |
| | | բնակչության քանակը | - |
| | - սողանքների տարածքներից | բնակավայրերը | - |
| | | բնակչության քանակը | - |
| | - Հայկական ատոմային էլեկտրակայան ՓԲԸ վթարի դեպքում վտանգավոր տարածքներից | բնակավայրերը | - |
| | | բնակչ. քանակը | - |
| | - քիմիական օբյեկտների հարակից վտանգավոր տարածքներից | բնակավայրերը | - |
| | | բնակչության քանակը | - |
| | - զենքի տեսակների կիրառման դեպքում բնակավայրերից և տարածքներից (սահմանամերձ գոտուց) | բնակավայրերը | 1 |
| | | բնակչության քանակը | 622 |
| 5. Քաղաքացիական պաշտպանության ուժեր | | | |
| 11. | Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ | քանակը | 4 |
| | | անձնակազմը | 33 |
| | Քաղաքացիական պաշտպանության բժշկական կազմավորումներ | քանակը | 1 |
| | | անձնակազմը | 1 |
| 6. Ավտոտրանսպորտ | | | |
| 12. | Տրանսպորտային միջոցներ | քանակը | 16 |
| 13. | Ինժեներական տեխնիկա | քանակը | 17 |

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

# ՊԼԱՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Նոր Խաչակապ գյուղական համայնքը (այնուհետև համայնք կամ գյուղ) գտնվում է հյուսիս-արևմտյան մասում:Մարզկենտրոն Վանաձորից գտնվում է 15կմ հեռավորության վրա:Հարևան է Արջահովիտ և Քարաձոր համայնքներին:Համայնքի տարածքով անցնում է <<Հարավ-Կովկասյան երկաթուղի>> ՓԲԸ-ի երկաթգիծը՝ ընդհանուր 3կմ երկարությամբ: Համայնքի տարածքի առավելագույն բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1480մ: Համայնքի զբաղեցրած տարածքը 2452.01հա է, այդ թվում բնակելի զանգվածը 89.22հա: Բնակչության թիվը 622 մարդ, այդ թվում արական սեռի 304, իգական սեռի 318 մարդ: Բնակչության թիվը ըստ տարիքային՝ 0-9 տարեկան 60, 10-17 տարեկան 47, 17-ից բարձր 515 մարդ: Աշխատունակ բնակչությունը կազմում է 415 մարդ:

Համայնքի հեռավորությունը պետական սահմանից 80 կմ է:

Կլիման չոր ցամաքային է, ցուրտ՝ սակավաձյուն,պարզկա ձմեռներով ու շոգ չորային ամառներով:Օդի միջին ջերմաստիճանը ձմռանը տատանվում է 3-ից 25 աստիճան ըստ Ցելսիուսի,ամռանը՝ 15-ից 30 աստիճան:Զբաղվածությունը՝ անասնապահություն և բուսաբուծություն: Տարածքով անցնում է 5կմ երկարությամբ Հ-163 հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհը:

Համայնքի տարածքում աշխատում են 2 խանութներ: Գործում է 1 դպրոց, 1 բուժակ մանկաբարձական կետ,կապի բաժանմունք:Համայնքն ունի փողոցային լուսավորության ցանց: Վտանգավորություն ներկայացնող կազմակերպություններ չկան:Համայնքի ջրամատակարարումը իրականացվում է ինքնահոս 2 աղբյուրներից՝ 0.8 լ/վ թողունակությամբ,առկա է խմելու ջրի կարգավորման 2 ջրամբար: Էներգամատակարարումը իրականացվում է թվով 2 ենթակայաններից՝ բարձր լարման 2500մ և 6500մ ցածր լարման էլեկտրահաղորդագծերից: Համայնքը գազաֆիկացված է:Առկա է միջին և ցածր ճնշման 6000մ երկարությամբ գազատար խողովակներ: Կապը հիմնականում ֆիքսված է բջջային կապի միջոցով: Հաշվառված են 175 գլուխ խոշոր եղջերավոր անասուններ, 525 թև թռչուն, 103 մեղվաընտանիք, 1 ձի:

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 3
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի օրինակելի ձևի

# ՍԽԵՄԱ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՊԻ ԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ




Ծանոթություն՝ ազդարարումն իրականացվում է ռադիոկապի, քաղաքային և բջջային հեռախոսակապի միջոցներով

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 4
Հայաստանի Հանրապետության
Նոր Խաչակապ համայնքի քաղաքացիական
պաշտպանության պլանի

# ՊԼԱՆ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության խումբը համայնքի ղեկավարի կարգադրությամբ իրականացնում է հետախուզություն համայնքի կենտրոնական փողոցներով:

1. Հետախուզության առարկա են հանդիսանում՝
   1) համայնքապետարանի աշխատակազմի վարչական շենքը.
   2) Դպրոցը, բուժակ մանկաբարձական կետը
   3) էներգամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման համակարգերը,
   4) կապի համակարգը,
   5) հրդեհների օջախները.
   6) բնակչության տարահանման և քաղաքացիական պաշտպանության ուժերի առաջանցման երթուղիները.
   7) գազամատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների օջախները.
2. Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում հետախուզության հիմնական խնդիրներն են՝
   1) սանիտարահամաճարակային վիճակի ճշգրտում.
   2) քաղաքացիական պաշտպանության ուժերի դեպի խոցման օջախներ մուտքի, ինչպես նաև տարահանման երթուղիների վիճակի ճշգրտում.
3. Հակառակորդի հարձակումից հետո հետախուզության հիմնական խնդիրներն են՝
   1) կիրառված զենքերի տեսակների, հարվածի ենթարված տարածքների և կազմակերպությունների բացահայտում.
   2) քաղաքացիական պաշտպանության ուժերի տեղակայման վայրերում և դեպի խոցման օջախներ մուտքի երթուղիներում իրադրության ճշգրտում.
   3) ինժեներական կառույցների, կոմունալ-էներգետիկ ցանցի, կապի գծերի, երկաթգծերի, ավտոմայրուղիների վիճակի ճշգրտում.
   4) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման ողջ ընթացքում իրադրության փոփոխության անընդհատ հսկողության իրականացում.
   5) հրդեհների տարածքների հայտնաբերում և հրդեհների տարածման ուղղությունների որոշում:
4. Համայնքում հետախուզությունը իրականացնում է համայնքի հետախուզական խումբը 15 մարդ անձնակազմով 2 միավոր տեխնիկայով:
5. Հետախուզության արդյունքները 2 ժամը մեկ զեկուցվում է Համայնքի ՔՊ շտաբին:

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 5

Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի

քաղաքացիական պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ

| ՀՀ ը/կ | Բնակչության թվաքանակը | Հակագազերի քանակը | | Շնչադիմակների քանակը | | Բժշկական պաշտպանության միջոցների քանակը | | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առկա | անհրաժեշտ | առկա | անհրաժեշտ | առկա | անհրաժեշտ | |
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. |
| 1 | 622 | - | 622 | - | 622 | - | 622 | - |

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 6
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

## ՀԱՇՎԱՐԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՍՊԱՐՄԱՆ

| ՀՀ p/կ | Բնակչության թվաքանակը | Այդ թվում | | | | | | Բնակչութ-յան պատս-պարվա-ծությունը % |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը պատսպարվում են | Ապաս-տարաններ | Հակաճառա գայթային թաքստոց-ներ | Բնակելի շենքերի և սեփական տների նկուղներ | Կազմակերպության շենքերի նկուղներ | Ստորգետնյա կայարանատեղեր, անցումներ և այլ տարածքներ | |
| 1. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. | 10. |
| 1 | 622 | 622 | - | - | 103 | 1 | - | 100 |

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ՝ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 7
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

# ՀԱՇՎԱՐԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ

| ՀՀ ը/կ | Տարահանվող բնակչության թվաքանակը | Տարահանման երթուղին | Ընդունող բնակավայրի անվանումը | | Տրանսպորտային միջոցների քանակը | Տրանսպորտային միջոցների երթերի քանակը | Տարահան ման երթուղու երկարությունը (կմ) | Ավտոշարասյուների քանակը Տրանսպորտային միջոցների քանակը մեկ շարասյան մեջ | Վառելիքաքսուքային նյութերի ծախսը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | անվանումը | բնակչության թվաքանակը | | | | | բենզին/ գազ (լ/ մ3) | յուղ (լ) | դիզելին (լ) |
| 1. | 2. | 3. | 4. | 5. | 6. | 7. | 8. | 9. | 10. | 11. | 12. |
| 1 | 622 | թիվ 1,2,3 փողոցներով | գ. Նոր Խաչակապ | 622 | | | | | | | |

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 8
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

# ՀԱՇՎԱՐԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔԻ
## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Կազմավորում-ների անվանումը | Կազմավորումը ստեղծող մարմին | Կազմա-վորումների | | Տեխնիկայով և գույքով ապահովում | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ավտոտեխնիկա | | | | | | ճանապարհաշինա-րարական և ամբարձիչ տեխնիկա | | | | հատուկ տեխնիկա | | | | քաղաքացիական պաշտպանության գույք | | | |
| | | | թիվը | անձնակազմի թվաքանակը | մարդատար | | բեռնատար | | և այլն | | մղանային | | և այլն | | ջրատար | | և այլն | | անհատական պաշտպա-նության միջոցներ | | և այլն | |
| | | | | | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է | սարքին է | անսարքին է |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 1 | փրկարար. խումբ | ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ | 1 | 15 | 3 | 10 | 5 | 1 | - | - | 2 | 1 | - | - | - | 2 | - | - | - | 15 | - | 15 |
| 2 | կապի օղակ | | 1 | 3 | - | 1 | - | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3 | - | 3 |
| 3 | հրշեջ ջոկ | | 1 | 5 | - | 1 | - | 1 | - | - | - | 1 | - | - | - | 1 | - | - | - | 5 | - | 5 |
| 4 | բժշկական օղակ | | 1 | 1 | - | 1 | - | 1 | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 1 | - | 1 |
| 5 | հաս կարգի պահպ. | | 1 | 4 | - | 1 | - | [illegible] | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 4 | - | 4 |
| 6 | հետախուզ. խումբ | | 1 | 10 | - | 2 | - | 2 | - | - | - | 1 | - | - | - | - | - | - | - | 10 | - | 10 |
| | Ընդամենը | | 6 | 38 | 3 | 16 | 5 | 7 | [illegible] | - | 2 | 3 | - | - | - | 3 | - | - | - | 38 | | 38 |

ՔՊ Շտաբի պետ Վ. ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 9
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| ՀՀ ը/կ | Կապի միջոցների տեսակը | Անհրաժեշտ քանակ (հատ) | Առկա քանակ (հատ) | Պակաս քանակ (հատ) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | Շարժական ռադիոկայան | 10 | - | 10 | - |

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱԴԱԼՅԱՆ

Հավելված 10
Հայաստանի Հանրապետության Նոր Խաչակապ համայնքի
քաղաքացիական պաշտպանության պլանի

ՀԱՇՎԱՐԿ
ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ

| ՀՀ ը/կ | Համայնքի անվանումը | Ընդամենը | | Էքսկավատոր | | Մղան | | Ավտո կռունկ | | Ինքնաթափ | | Կոմպրեսոր | | Այլ տեխնիկա | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը | Առկա տեխն քանա կը | Ան հրա ժեշտ. քանա կը |
| 1. | ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ | 10 | 13 | 2 | 1 | 1 | 1 | _ | _ | 4 | 2 | - | 2 | 3 | 7 |

ՔՊ ՇՏԱԲԻ ՊԵՏ Վ.ԲԱՂԴԱԼՅԱՆ